ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/197

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26-1/11889-2021 գրությամբ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/423-21 գրության հիման վրա 26.07.2021թ. թիվ 26/26-1/11889-2021 գրությամբ նախաձեռնել է «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/197 ընթացակարգի շրջանակներում 30.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/423-21 գրությամբ հայտնել է.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետոն» ՊՈԱԿ-ի կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատատակով հայտարարված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-23» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված ընկերությանն ուղարկվել է Պայմանագրի նախագիծը, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում Պատվիրատուին չի ներկայացվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետը Ձեզ ենք ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/197 ընթացակարգի շրջանակներում 30.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4 <u>ՍՑ-ՆԳ-2021/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-23» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաղթող է ճանաչվել «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի հետ ներկայացվել են պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով, որոնց վճարման պահանջագրերը ստորագրված և կնքված չեն, և որոշում է կայացվել ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները:

4. Ընկերությունը Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.07.2021թ. թիվ ԱՎ/0108.6/412-21 գրությամբ ծանուցվել է հետևյալի մասին.

«Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ- 2021-23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Ձեր կողմից պայմանագրի հետ ներկայացվել են պայմանագրի ապահովում տուժանքի մասին համաձայնագրի ձևով և որակավորման ապահովում տուժանքի մասին համաձայնագրի ձևով: Սակայն փաստաթղթերը թերի են ներկայացված՝ վճարման պահանջագրերը ստորագրված և կնքված չեն:

Առաջարկում ենք երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները և ներկայացնել Պատվիրատուին»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն առաջարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել թերությունները և որոշում է կայացվել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան գրություն՝ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26-1/11889-2021 գրությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/423-21 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաղթող է ճանաչվել «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի հետ ներկայացվել են պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով, որոնց վճարման պահանջագրերը ստորագրված և կնքված չեն, և որոշում է կայացվել ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները:

Ընկերությունը Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.07.2021թ. թիվ ԱՎ/0108.6/412-21 գրությամբ ծանուցվել է հետևյալի մասին.

«Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ- 2021-23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Ձեր կողմից պայմանագրի հետ ներկայացվել են պայմանագրի ապահովում տուժանքի մասին համաձայնագրի ձևով և որակավորման ապահովում տուժանքի մասին համաձայնագրի ձևով: Սակայն փաստաթղթերը թերի են ներկայացված՝ վճարման պահանջագրերը ստորագրված և կնքված չեն:

Առաջարկում ենք երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները և ներկայացնել Պատվիրատուին»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2021թ. նիստի ժամը 16:00-ի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ն առաջարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել թերությունները և որոշում է կայացվել, հիմք

ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան գրություն՝ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 13.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված թերությունները, մինչդեռ ***մինչև Ընկերությանը տրված ժամկետի լրանալը, այն է՝ 16.07.2021թ. ներառյալ,*** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.07.2021թ. նիստի ժամը ***16:00-ի*** թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունն առաջարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել թերությունները, և որոշում է կայացրել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը և 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը, ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան գրություն ներկայացնելու՝ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, ***որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 16.07.2021թ. ժամը 16:00-ին՝ 3 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում,***

արձանագրել է Ընկերության կողմից թերությունների չշտկման փաստ և վերջինիս տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար. այս մասով գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26-1/11889-2021 գրությամբ «Լ.Ն.Մ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**